

դաւանութեանց հողերականներն էլ այս ուղղութեամբ կուռէին արբեցողութեան դէմ, բայց ի հարկէ դորա համար նախ իրենք պէտք է հետու մնան մարդկութեան այդ շնասակար ակտից:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Դանթէյի մահուան 600 ամեակը: Ռալֆենայի կաթոլիկները պատրաստուում են տօնելու յայտնի Դանթէյի մահուան (+ 1321) վեց հարիւր ամեակը: Մեղինի արքատի նախաձեռնութեամբ կազմուել է առանձին յանձնաժողով, նախագահութեամբ արքեպիսկոպոսի, ժողովելու մի յայտնի գումար յաւերժացնելու մեծ Յորելեարի յիշատակը: Ենթադրուում է վերականգնել և զեղեցկացնել սուրբ Փրանցիսկի նշանաւոր առանձին ճարտարապետական ոճով կառուցած գլխաւոր մայր եկեղեցին, որտեղ թաղուած է Դանթէն, իսկ եթէ միջոցները սուղ լինեն, այնտեղ կանգնեցնել մի արձան Դանթէին: Պայքը յայտնել է իւր գոհունակութիւնն ու հաճութիւնը՝ հրաւիրելու Իտալիայի բոլոր կաթոլիկներին մասնակցելու բանաստեղծի յօբելեանական տօներին, որովհետեւ նա «կաթոլիկ հաւատի և քաղաքակրթութեան պարծանքն է»: Դանթէն ծնուել է 1265 թ. և իւր մեծ հանճարով դարձել է ոչ միայն Իտալիայի, այլև աշխարհիս յայտնի նշանաւոր մեծ բանաստեղծը: Նա ունի բազմաթիւ աչքի ընկնող աշխատութիւններ, որոնց մէջ նշանաւոր է «Աստուածային կատակերգութիւն»ը, որով և նա անմահացել է: Այդ կատակերգութիւնը ներկայացնում է մահից յետոյ հողիների կեանքը և զրութիւնը հանդերձեալ աշխարհի երեք թագաւորութեանց մէջ և դորա համապատասխան էլ բաժանուած է երեք մասի.—Դժովք, Քաւարան. և Արքայութիւն, իւրաքանչիւրը բաղկացած 33 երգերից: Բանաստեղծը հարուստ երևակայութեամբ չըջագայելով այդ երեք աշխարհն էլ՝ մանրամասն զեղեցիկ կերպով նկարագրում է և համամարդկային գրականութեան տալիս այդ շատ նշանաւոր երկը:

Կարդինալ Ռամպոլլայի մահը: Ինչպէս հաղորդում են թերթերը, անցեալ զեկտեմբերի 4-ին Հռոմում վախճանուել է յայտնի կարդինալ Ռամպոլլան, որը մեծ ազդեցութիւն ունէր Վատիկանում: Կարդինալ Մարիանօ Ռամպոլլան աչքի էր ընկնում իւր յայտնի պետական մեծ խելքով, և խոշոր դեր էր խաղում Լևոն XIII պապի ժամանակ, երբ նորա մօտիկ խորհրդականն էր համարուում:

1880 թ. Ռամպոլլոն նշանակուեց աւագ քարտուղար արտա-
կարգ կարեւոր գործերի միաբանութեան, 1882 թ. եղաւ արքեպիս-
կոպոս և Մազրիցումն նուիրակ պապի, իսկ 1887-ին էլ կարգինալ:

Ռամպոլլան Լևոն XIII պապի մօտ կարգինալ եղած ժամա-
նակ միշտ պնդում էր, որ Վատիկանը պէտք է ընդունէ հասարա-
կապետութիւնը Ֆրանսիայում և յարմարեցնել իւր գործունէու-
թիւնը Ֆրանսիայում այդ երկրի նոր բեժիմին Դորանով Ռամ-
պոլլան Ֆրանսիայում ձեռք բերեց մեծ ժողովրդականութիւն: Երբ
Պիոս X պապի աննաշտ քաղաքականութիւնը առաջ բերաւ բաժա-
նումն Ֆրանսիայի և Վատիկանի մէջ, Ռամպոլլան մեղադրում էր
պապին և նորա մերձաւոր խորհրդական Մերրի-դել-Վալին և ա-
տում էր, եթէ իշխանութեան մօտ ինքն իննէր, այդ դէպքում
Ֆրանսիայից բաժանումն չէր լինիլ:

Ռամպոլլան միշտ յայտնի էր իբրև եռապետական դաշնակ-
ցութեան հակառակորդ և կողմնակից էր բարեկամական մերձեցման
Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ: Լևոն XIII պապի մահից յետոյ
Ռամպոլլան համարում էր ամենահաւանական թեկնածուն պա-
պական աթոռի, բայց երբ պապի ընտրութեան ժողովում կարգի-
նալներից մէկը Ֆրանց Յովսէփ կայսեր կողմից Ռամպոլլայի ընտ-
րութեան ընդդէմ բողոքով դուրս եկաւ, նորա ընտրութեան խնդիրը
ջուրն ընկաւ:

Վերջին ժամանակներում Պիոս X-ի հիւանդութեան պատ-
ճառով մամուլի մէջ մի քանի թեկնածու կարգինալների անուն-
ներ էին տալիս, որոնք ունէին ամենահաւանական շանսերը պա-
պական աթոռին արժանանալու համար, այդ ամենահաւանական
թեկնածուներից մէկն էլ համարում էր Ռամպոլլան, թէ և միաժա-
մանակ հարց էր առաջ պալիս, թէ արդեօք այս անգամ ևս Ֆրանց
Յովսէփը կրդնի իւր մերժումն (veto):

Պիոս X-ի ընտրութիւնից յետոյ Ռամպոլլան՝ անակնկալի
հանդիպելով Ֆրանց Յովսէփ կայսեր կողմից և զգալով իւր առան-
ձնացած դրութիւնը Վատիկանում, հեռացաւ գործերից:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Աւետարանական-Լուսեւրական ընդհանուր համագումարը Ան-
ցեալ տարուայ 8—11 սեպտեմբերի Նիւրնբերգ քաղաքում եղել է ա-
ւետարանական-լուսեւրական XIV համագումարը, կազմուած Եւրո-
պայի և Ամերիկայի զանազան ներկայացուցիչներից: Համագումարի
զլխաւոր նպատակն է եղել՝ որ արձարձեն այն միտքը՝ թէ պէտք է